«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝ Սովորողների ուսումնական մոտիվացիայի բարձրացումը «Շրջված դասարան » մեթոդի միջոցով:

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Բեդոյան

Դպրոցը՝ Մայիսյանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Շուշան Վարդանյան

ԱՐՄԱՎԻՐ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3
Գրականության ակնարկ 4
Գործնական համատեքստ 9
Հետազոտության ընթացքը 11
Տվյալների մշակում և ամփոփում 15
Ամփոփում 18
Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԱԽԱԲԱՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից դպրոցում ուսուցման արդյունավետությունը կախված է նախ և առաջ մոտիվացիայից: Իսկ ի՞նչ է մոտիվացիան : Մոտիվացիան ներքին և արտաքին դրդիչ գործոններն են, որոնք, շարժառիթ հանդիսանալով, դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին: Մոտիվացիան շատ կարևոր է արդյունավետ աշխատանքի համար: Այն ներքին ցանկություն է, որը մղում է դեպի առաջ՝ դեպի նախանշած նպատակը: Գրող Լես Բրաունը մոտիվացիայի մասին ասել է . «Ինչ –որ բան ցանկանալը բավական չէ, դու պետք է ձգտես դրան: Քո մոտիվացիան պետք է այնքան հզոր լինի, որ կարողանաս հաղթահարել այն խոչընդոտները, որոնք անխուսափելիորեն կհայտնվեն ճանապարհիդ »: Երբ մարդը թույլ է, հոգնած, չունի գործելու, արարելու ցանկություն, դա կարող է լինել մոտիվացիայի բացակայության հետևանք: Այդ երևույթը շատ տեսանելի է դպրոցում՝ երեխաների մոտ: Երեխաները շատ հաճախ են հոգնում, ձանձրանում, որովհետև չեն հասկանում սովորելու հիմնական նպատակը, նրանք չեն կարող պատկերացնել սովորելու լավ կողմերը կամ առանց գիտելիքների դպրոցն ավարտելու բացասական հետևանքները: Հետևաբար մշտական քարոզները այդ մասին նրանց ոչինչ չեն տալիս, այլ միայն հոգնեցնում են , հաճախ էլ ՝հունից հանում: Դրա փոխարեն ուսուցիչը պետք է մտածի աշակերտներին մոտիվացնելու մասին, նրանց մշտապես հետաքրքիր առօրյայով ապահովի, որպեսզի ուսումնառության պրոցեսը նրանց համար ձանձրալի չթվա: Նրանք պետք է մշտապես ունենան փոքրիկ մոտիվացիաներ ՝գնահատականը, խրախուսանքի տարբեր տեսակները, տարբեր մեթոդներ ու միջոցներ,որոնք մշտապես հետաքրքիր կդարձնեն ուսումնառության պրոցեսը: Գտնելով , որ մոտիվացիան ուսուցման գործընթացում շատ արժեքավոր ու կարևոր բաղադրիչ է, որոշեցի ուսումնասիրել հենց այս թեման ու վեր հանել թեմայի հետ կապված նրբությունները հատկապես դեռահասության տարիքում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է դեռահասների հետաքրքրության ավելացմանը և ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը:

Հետազոտության նպատակն է ՝

1. Ուսուցանվող թեմայի վերաբերյալ ձևավորել մոտիվացիա և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

2.«Շրջված դասարան » մեթոդի միջոցով խթանել աշակերտների մասնակցությունը դասին:

3. Պարզել ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպման ազդեցությունը 10-րդ դասարանի դեռահասների հետաքրքրության ավելացման և ուսումնական մոտիվացիայի բարձրացման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Մոտիվացիայի ուսումնասիրության տեսական հիմքերը: Մարդկային վարքի մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս հնուց : Բազմաթիվ փիլիսոփաների աշխատություններում կարող ենք հանդիպել մոտիվացիայի վերաբերյալ տեսությունների: «Մոտիվ » տերմինը ռուսացված ֆրանսերեն «մոտիվ » բառն է, որը բառացիորեն նշանակում է «գրգռում», կամ լատիներեն «moveo» բառից `«ես շարժվում եմ » : Հոգեբանության մեջ մոտիվը մարդու արարքների դրդապատճառն է :/8 /Մարդու գործունեության սկզբնական դրդապատճառը նրա նյութական և հոգևոր կարիքները բավարարելու ցանկությունն է : Ներկայումս մոտիվացիան՝ որպես հոգեկան երևույթ, մեկնաբանվում է տարբեր ձևերով : Մի դեպքում, որպես գործոնների համախումբ, որոնք աջակցում և առաջնորդում են, այսինքն որոշում են վարքագիծը (Կ. Մադսեն,Ժ. Գոդֆրուա), մեկ այլ դեպքում՝ որպես շարժառիթների համադրություն (Կ.Կ.Պլատոնով,1986), երրորդում `որպես ազդակ, որը հանգեցնում է վարքի ակտիվությանը և որոշում է նրա ուղղվածությունը [4, էջ 65] : Ամենից հաճախ գիտական գրականության մեջ մոտիվացիան համարվում է հոգեբանական պատճառների համադրություն, որով բացատրվում է մարդու վարքագիծը, դրա ծագումը, ուղղվածությունն ու գործունեությունը [5, էջ 513] :Ներկայումս գոյություն ունեն մոտիվացիայի սահմանման մի շարք տարբերակներ, որոնցից և մի քանիսը կներկայացնենք: Մոտիվացիան որոշակի էներգետիկ համակարգ է, որը ձգտում է լիցքաթափել, բավարարել այն շարժառիթներն ու պահանջմունքները, որոնք կազմում են մոտիվացիայի էությունը [ըստ 1,էջ 337] : Այս սահմանմանը նման մեկ այլ ձևակերպում ևս կա, որն էլ մոտիվացիան դիտարկում է որպես հոգեկան գործընթացների մի շարք, որոնք վարքագծին տալիս են էներգետիկ իմպուլս և ուղղվածություն [7, էջ 51]: Մոտիվացիան գործընթացների համակարգ է, որը պատասխանատու է խթանող գործունեության համար, ինչն էլ պահանջում է այնպիսի հասկացություն, որը կկառուցի այդ համակարգը և, որպես այդպիսին, առանձնացվում է պահանջմունքը, որպես մոտիվացիայի միավոր (Ա. Ն. Լեոնտև) [3, էջ 23]: Ա. Մասլոուն իրավացիորեն նշում էր, որ մոտիվացիայի ցանկացած տեսություն պետք է ենթադրի, որ մոտիվացիան շարունակական, անսահման և փոփոխական է, որ այն գրեթե օրգանական վիճակի համընդհանուր բնութագիրն է /6/ :

Ներկայիս հոգեբանության մեջ օգտագործվում են մոտիվացիայի տարբեր դասակարգումներ՝ արտաքին և ներքին, դրական և բացասական, կայուն և անկայուն, ինչպես նաև անհատական, խմբակային, ճանաչողական և այլն: Այսպես՝ **ներքին** մոտիվացիան կապված է գոյություն ունեցող օբյեկտից, կատարված գործողություններից գոհունակություն ձեռք բերելու հետ :Ներքին մոտիվացիան արտահայտվում է հետաքքրքրության տեսքով : Հետաքրքրվելով ինչ-որ բանով՝ մարդը ոգևորվում է, հետաքրքրության օբյեկտի հետ աշխատելիս դժվարություններ չի ունենում, և փոխհատուցում չի պահանջում [9]: **Արտաքին** մոտիվացիան պայմանավորվում է արտաքին տարբեր հանգամաներով: Արտաքին մոտիվացիան կարող է լինել դրական (հաջողության ձգտում) և բացասական (խուսափել ձախողումից)[9]: Ըստ Ա.Գ.Մակլակովի՝ ներքին (պայմանական) և արտաքին (իրավիճակային) մոտիվացիաները փոխկապակցված են [5,էջ 513]:

Բացի դրանից մոտիվացիան ունի նաև գործողության նպատակային բնույթ, ինչից ելնելով էլ Վ. Գ. Լեոնտևն առաջարկել է դիտարկել մոտիվացիայի երկու տեսակ.

1. **առաջնային մոտիվացիա**, որը դրսևորվում է բնազդի, պահանջմունքների ձևով

2.**երկրորդային մոտիվացիա**, որը դրսևորվում է շարժառիթի ձևով: Իսկ շարժառիթներն իրենց հերթին լինում են ներքին և արտաքին [ըստ 2]: Ներքին շարժառիթները ձևավորվում են մարդու պահանջմունքների, նրա հույզերի, հետաքրքրությունների հիման վրա, իսկ արտաքինները՝ իրավիճակի , շրջակա միջավայրի գործոնների ազդեցության [2]:

Մոտիվացիան կոչվում է **դրական** , երբ պայմանավորված է դրական խթաններով, իսկ բացասականի վրա հիմնվածը՝ **բացասական**: **Կայուն** է համարվում այն մոտիվացիան, որը հիմնված է մարդու պահանջմունքների վրա, քանի որ այն լրացուցիչ ամրապնդում չի պահանջում, և հետևաբար, **անկայուն** է այն մոտիվացիան, որը պահանջում է լրացուցիչ ամրապնդում [8]:

Ուսումնական մոտիվացիան ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանը: Մոտիվները ձևավորվում են սովորողի բնավորության առանձնահատկություններով և կարող են տարբեր լինել, կախված տարիքից և նույնիսկ տրամադրությունից: Այդ պատճառով առանձնացնում են մոտիվացիայի երեք մակարդակ

.բարձր, երբ սովորողը ցանկություն ունի դպրոց գնալ, սովորել նոր բան, շփվել հասակակիցների, ուսուցիչների հետ, սիրում է իր կարգավիճակը

.միջին , երբ սովորողին գրավում է ոչ թե ուսումնական գործընթացը, այլ ուսուցիչների և դասընկերների հետ շփվելու ցանկությունը

. **ցածր** , երբ սովորողը դպրոց գալու ցանկություն չունի և նրան չի գրավում ուսումնական գործընթացը:

Դրական ուսումնական մոտիվացիա ստեղծելու, զարգացնելու հարցում մեծ է ուսումնանական հաստատության գործունեության դերը, ուսուցչի կիրառած մանկավարժական մեթոդները, դասարանում տիրող առողջ մթնոլորտը, ուսուցիչ – աշակերտ փոխհարաբերությունները և այլն: Այսպիսով երեխայի ուսումնական գործունեությունը խթանում է ոչ թե մեկ, այլ իրար հետ փոխկապակցված, իրար փոխլրացնող շարժառիթների մի ամբողջ համակարգ : Այս հետազոտության նպատակն է, ուսումնասիրել «Շրջված դասարան» մեթոդի միջոցով սովորողների մոտ ուսումնական մոտիվացիայի ձևավորման արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ՝ «ՇՐՋՎԱԾ ԴԱՍԱՐԱՆ»

«Դասարանի շրջում» մեթոդի էությունն այն է, որ նյութի հետ սովորողների առաջին ծանոթությունը կայանում է դասարանից դուրս՝ սովորաբար կա՛մ կարդալով, կա՛մ տեսադաս դիտելով, իսկ հետո հատկացված դասաժամի ընթացքում ավելի դժվար աշխատանքն է կատարվում՝ նյութի ամրապնդունը խնդիրների լուծմամբ, քննարկումով:

Սովորողներն իմացական ավելի ցածր մակարդակի աշխատանքն (գիտելիքի ձեռքբերումը և ընկալումը) անում են դասարանից դուրս, իսկ ավելի բարձր մակարդակի աշխատանքի վրա կենտրոնանալը (կիրառումը, վերլուծումը, համադրումը, արժևորումը) կատարվում է դասարանում, որտեղ նրանք ունեն դասընկերների և ուսուցչի աջակցությունը:

Բարբարա Վոլվուդը և Վիրջինիա Ջոնսոն Անդերսենը այս մոտեցումը զարգացրել են իրենց «Արդյունավետ գնահատում » (1998) գրքում : Նրանք մի մոդել են առաջարկում, որով սովորողները սկզբնական գիտելիքն ստանում են նախքան դասը, իսկ դասի ընթացքում կենտրոնանում են համադրման, վերլուծության, խնդիրների լուծման և այլնի վրա: Որպեսզի համոզված լինեն, որ սովորողներն իրոք անում են անհրաժեշտ նախադասարանային աշխատանքը տանը, Վոլվուդը և Անդերեսենը նոր նյութի հետ առաջարկում են նաև այդ նյութի վրա հիմնված որոշ տնային առաջադրանքը (գրավոր շարադրանք, ոչ բարդ խնդիրներ) : Այս մոդելը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման վրա, որոնց շնորհիվ իրականացվում է դասարանի շրջումը: Առավել հաճախ այդ նյութերն իրենցից ներկայացնում են փոքր տեսանյութեր, որոնք ուսուցիչներն իրենք են պատրաստում, իսկ աշակերտները առկա դասընթացից առաջ դրանք ուսումնասիրում են ինքնուրույն: Ուսուցումն իրականացվում է դասի ընթացքում ուսուցչի անհատական աջակցությամբ : Դա

հնարավորություն է տալիս ժամանակ խնայել ակտիվ մանկավարժական աշխատանքներ իրականացնելու, աշակերտների ըմբռնումը ստուգելու և դասընթացի հայեցակարգերը խորացնելու համար : «Շրջված դասարան» մոդելի կիրառման դեպքում ուսուցիչը գիտելիքների փոխանցողի դերից անցնում է գիտելիքների միջնորդի, ուղեկցողի և խորհրդատուի դերի, ով փնտրում,ստեղծում և սցենարավորում է թվային ռեսուրսներ : 2007 թ-ից այս մոտեցումն օգտագործվում է Միացյալ Նահանգների մանկապարտեզներում, միջնակարգ դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: 2011թ-ից ի վեր, նախ Կանադայում, այնուհետև Եվրոպայում և այլ ֆրանսախոս երկրներում կիրառում են այս մոդելը: Կոլորադոյի քոլեջի քիմիայի երկու ուսուցիչներ ՝ Ջոնաթան Բերգմանը և Աարոն Սամսը համարվում են «Շրջված դասարան» մեթոդի առաջամարտիկները : Լինելով գյուղական դպրոցի ուսուցիչներ ՝նրանք աշակերտների բացակայության շատ մեծ խնդիր ունեին: Մի օր նրանք անսպասելիորեն բացահայտեցին, որ կարող են Power Point –ի սլայդները ձայնագրել իրենց ձայներով, դարձրել տեսանյութեր և ներբեռնել You Tube -ում, որն այդ ժամանակ նոր էր զարգանում: Այսպիսով, 2007թ-ին նրանք սկսեցին ձայնագրել դասախոսությունները և տեղադրել առցանց այն աշակերտների համար, ովքեր չէին կարողանում ներկա գտնվել իրենց դասին: Առցանց դասախոսությունները շատ արագ ներգրավեցին այլ աշակերտների, ովքեր սկսեցին նայել այդ տեսանյութերը, քանի որ դա նրանց թույլ էր տալիս ավելի լավ հասկանալ ուսուցիչների կողմից քննարկվող թեմաները, ովքեր արդեն սկսել էին օգտագործել այդ ձայնագրությունները իրենց դասաժամի ընթացքում և ձայնագրում էին իրենց ուսումնական տեսանյութերը: Արդյունքում առաջանում էր «Շրջված դասարան» մեթոդը... Արդյո՞ք դա իսկապես ժամանակակից պրակտիկա էր և Բերգմանը և Սամսը առաջինն էին, որ օգտագործեցին այս մոտեցումը դասի ընթացքում: Այն պրակտիկան, որ ուսուցիչը պահանջում է իր աշակերտներից կարդալ տեքստը դասից առաջ, պատրաստել նյութ մի թեմայի շուրջ դասաժամին ներկայացնելու համար, որոնել փաստաթղթեր գրադարանում կամ փաստաթղթավորման կենտրոնում, բոլորովին նոր չէ, և շատ ուսուցիչներ կիրառում են ամեն օր :Նորություն կարող են համարվել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները, որոնք փոփոխություն են ապահովում և շարունակ զարգանում են :Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները ավելի մատչելի են դառնում իրենց հեշտ օգտագործման, ցածր գնի կամ անվճար լինելու շնորհիվ: Այդ տեխնոլոգիական գործիքները թույլ են տալիս ուսուցիչներին և աշակերտներին արտահայտել իրենց կարծիքներն առցանց, կազմակերպել քննարկումներ և հարցումներ, ձեռք բերել նոր գիտելիքներ: Ուսուցչի և աշակերտների փոխազդեցության ժամանակահատվածը կարող է օգտագործվել հմտություններ զարգացնող աշխատանքներ կատարելու նպատակով: Պարզվում

է, որ այս մոտեցումը լավ միջոց է աշակերտների և իրենց ուսուցիչների հարաբերությունները ամրապնդելու համար:

Այս մեթոդը նաև լավ միջոց է ուսուցումը դասաժամից առաջ և հետո տարբերակելու և անհատականացնելու համար: Աշակերտն այսպիսով հետևում է դասին `իր համար ցանկալի տեմպով :Նա կարող է դիտել տեսանյութը այնքան անգամ, որքան ցանկանում է: Աշակերտները կարող են դանդաղեցնել կամ արագացնել իրենց ուսուցման տեմպը`ըստ իրենց սեփական կարիքների : Ուսուցիչն ավելի շատ ժամանակ կարող է տրամադրել անհատապես կամ աշակերտների փոքր խմբերի հետ աշխատելու համար` նրանց առաջարկելով իրենց կարիքներին համապատասխան առաջադրանքներ: «Շրջված դասարան» -ում աշխատանքը հիմնված է աշակերտի վրա. վերջինս դառնում է իր ուսուցման դերակատարը և մասնակցում է դասընթացի համաստեղծմանը: Այս պրակտիկայի շնորհիվ ավելի շատ ժամանակ է հատկացվում հմտությունները զարգացնելուն և խորացնելուն` կատարելով ավելի բարձր մակարդակի ճանաչողական առաջադրանքներ, որոնք ավանդական դասաժամերի դեպքում կատարվում են դասերից հետո:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հետազոտությունը կատարել եմ 10-րդ դասարանում, որտեղ սովորում են 13 աշակերտներ : Հետազոտությունն անցկացնելու համար ընտրել եմ «Շրջված դասարան» մեթոդը, օգտագործել եմ հայտորոշիչ թեստեր, հարցաթերթեր:

Մինչ հետազոտական գործընթացը սկսելը, առանձնացրել եմ մի քանի կարևոր խնդիրներ՝

- մոտիվացիայի խթանումն ու զարգացումը դասին
- աշակերտների ներգրավվածության ապահովումը դասին
- աշակերտների ուշադրության կենտրոնացումը դասին
- հետաքրքրասիրության բարձրացումն առարկայի նկատմամբ
- ստեղծագործականության զարգացումը դասին

Վերոնշյալ խնդիրներից առաջնահերթ եմ համարում հատկապես աշակերտների մոտիվացիայի բարձրացումը և ընտրեցի այս մեթոդը, քանի որ հոգեբանների մեծ մասի կարծիքով դեռահասների համար կարևոր է հասունության զգացումը, անկախության և սեփական ես-ով առաջնորդվելու գաղափարը: Որովհետև իրեն համեմատելով չափահասի հետ, նա որևէ տարբերություն չի տեսնում և ցանկանում է ներգրավվել այնպիսի գործողություններում, որոնք իրենց կյանքում առաջին անգամ են տեղի ունենում և իրենք կարող են դրսևորվել նոր ունակություններով: Արդի ժամանակներում դեռահասների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրության բացակայությունը լուրջ խնդիր է ոչ միայն ծնողների, այլև ուսուցիչների և հոգեբանների համար: Ժամանակակից ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործնականում դեռահասները չեն ենթարկվում ճնշումներին, և նախորդ սերունդների համար աշխատած մեթոդներն այսօր անարդյունավետ են և ժամանակավրեպ: Հետազոտությանս նպատակն է խթանել սովորողների մոտիվացիայի բարձրացմանը, որի արդյունքում կունենամ ուսուցման և դաստիարակաության գործում զգալի դրական արդյունք:

Աշակերտների մոտիվացիայի մակարդակը պարզելու համար խնդրել եմ լրացնել հարցաթերթ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ ընտել է իր տարբերակը,թե ինչու է գալիս դպրոց:
Աշակերտները պետք է ընտրեին հետևյալ տարբերակներից մեկը.

1. Ուզում եմ դպրոց գալ, քանի որ ցանկություն ունեմ նոր բաներ սովորելու, սիրում եմ շփվել դասընկերներիս և ուսուցիչներիս հետ, ինձ դուր է գալիս իմ կարգավիճակը:
2. Ինձ գրավում է ոչ թե ուսումնական գործընթացը, այլ ուսուցիչների և դասընկերների հետ շփվելու ցանկությունը:

3. Դպրոց գալու ցանկություն չունեմ և ինձ չի հետաքրքրում ուսումնական գործընթացը:

Արդյունքների վերլուծությամբ ստավեց մոտիվացիայի միջինից դեպի ցածրի ձգտող աստիճան: Հետևաբար պետք էր հնարավորինս ամեն ինչ անել , որ դասարանում ձևավորվի գոնե կարճաժամկետ մոտիվացիա՝ առարկայի նյութը հետաքրքրությամբ և հիմնավոր ուսումնասիրելու և յուրացնելու համար:

Հետազոտությունն անցկացրել եմ հանրահաշվի երկու դասերի ընթացքում, ընդ որում առաջին դասն անցկացրել եմ առանց մեթոդի կիրառման, երկրորդ դասը «Շրջված դասարան» մեթոդի կիրառմամբ: Յուրաքնչյուր դասի վերջում «Անդրադարձ» փուլում բաժանել եմ հայտորոշիչ թեստեր , պարզելու համար որքանով են յուրացրել դասը : Նախապես տեղեկացրել ե , թե որ օրն ենք դասն անցկացնելու «Շրջված դասարան» մեթոդով, հանձնարարել եմ դասը սովորել դասագրքից ինչպես նաև օգտվել «Իմ դպրոց» կայքից , «Քան ակադեմիա » հարթակից և MathNet.am կրթական կայքից:

Հայտորոշիչ թեստերի արդյունքները ստուգել և գրանցել եմ նախապես կազմած աղյուսակներում, համեմատել արդյունքները և կազմել դիագրամ, որտեղ արտացոլվել է մոտիվացիայի ձևավորման աստիճանը ըստ կիրառած մեթոդների և աշակերտների տված պատասխանների : Հետո իրականացրել եմ հետազոտման դասը, նույն չափիչ գործիքների միջոցով հավաքագրել եմ տվյալները և վերլուծելով արդյունքները ունեցել եմ աշակերտների մոտիվացիայի, ինչպես նաև ներգրավածության, ակտիվության, հետաքրքրության սկզբնական և վերջնական պատկերը : Դասերին հրավիրել եմ դասադիտարկողներ, ովքեր լրացրել են դասադիտարկման հարցաթերթիկ աշակերտների պատրաստվածության, ներգրավվածության, ակտիվության, ստեղծագործ մտքեր արտահայտելու վերաբերյալ: Դասերի ավարտից հետո քննարկել ենք ընտրված մեթոդներն ու դրանց արդյունավետությունը աշակերտների մոտիվացիայի բարձրացման գործում :

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

«Մեծ աշխատանք անելու միակ ճանապարհը,

սիրելն է այն,ինչ դու անում ես »

Սթիվ Ջոբս

Դասապրոցեսում որևէ առարկայի նկատմամբ աշակերտների հետաքրքրության ձևավորումը, կայացումը և շարունակականությունը, հմուտ մանկավարժական գործողությունների և մեթոդների միջոցով անընդհատ զարգանալով և ամրապնդվելով, դառնում է ուսման նկատմամբ դրական վերաբերմունքի հիմքը, ստեղծում է ուժեղ մոտիվացիոն դաշտ: Միաժամանակ հետաքրքրությունը կրում է որոնողական բնույթ: Դա նշանակում է, որ հետաքրքրության ազդեցության ներքո աշակերտը ձգտում է պատասխաններ փնտրել մշտապես առաջ եկող հարցերին, ընդ որում այդ գործընթացը կրում է շարունակական բնույթ և ուղեկցվում է աշակերտի կողմից ստեղծագործական աշխատանքով: Շատ կարևոր է, որ հետաքրքրասիրությամբ առաջնորդվող աշակերտը ուսումնական գործունեությունը ծավալում է բարձր էմոցիոնալ ֆոնի վրա, ինչն էլ ավելի է նպաստում ուսումնական գործընթացի արդյունավետությանը և խթանում է սովորողի հոգեկան գործընթացների՝ հիշողության, մտածողության, երևակայության, ստեղծագործականության բարեհաջող ընթացքը:

Հետազոտությունն անցկացրել եմ 10-րդ դասարանում, որտեղ սովորում են տասներեք աշակերտներ, չորս տղա և ինը աղջիկ: Տղաները և աղջիկներից երեքը մաթեմատիկական թույլ տվյալներ ունեն, դասաժամին բավարարվում են գրատախտակից գրվածը արտագրելով և որպես բանավոր հարցում հիմնականում պահանջում եմ դասի կարևոր հասկացությունների սահմանումները կամ կանոնների ձևակերպումը: Աղջիկներից աշխատում են վեցը, որոնցից երեքը ունեն միջինից բարձր մաթեմատիկական ընդունակություններ, մյուսները ավելի թույլ: Ուսումնական գործընթացում տարբեր պատճառներով նկատվում է դպրոցի, կրթության , նկատմամբ վերաբերմունքի փոփոխություն,անինքնավստահություն,սովորելու ցանկության բացակայություն: Սակայն ծանոթանալով դեռահասների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին ,գիտակցելով դրանց ժամանակավոր բնույթը, պետք է ամեն ինչ անել որպեսզի աշակերտները կարևորն գիտելիքն ու դրա դերը կյանքում:

Առաջին դաս, հանրահաշիվ , թեմա՝ «Իրական թվի իռացիոնալ ցուցիչով աստիճանը»: Դասն անցկացրել եմ առանց փորձարկվող մեթոդի և այլ նոտիվացնող մեթոդի կիրառման,որպեսզի հետազոտության արդյունքներնավելի ակնհայտ լինեն վերլուծության համար: Դասի սկզբում կատարեցինք տնային աշխատանքի ստուգում, անհասկանալի հարցերի քննարկում ,այնուհետև մտագրոհի միջոցով վերհիշեցինք և ամփոփեցինք իրական թվի բնական ցուցիչով աստիճանի, ռացիոնալ ցուցիչով աստիճանի վերաբերյալ ունեցած գիտելիքները և նկատեցինք, որ որպեսզի դրական թվի կամայական իրական ցուցիչով աստիճանը որոշված լինի, մնում է սահմանենք դրական թվի իռացիոնալ ցուցիչով աստիճանը: Այնուհետև ավանդական դասախոսության մեթոդով ներկայացրեցի դասի նոր հասկացությունները, հատկությունները ձևակերպեցինք աշակերտների օգնությամբ: Հետո լուծեցինք վարժություններ թեմայի ամրապնդման համար: Ամփոփման ժամանակ կիրառեցինք ԳՈՒՍ մեթոդը: Անդրադարձ կատարելիս աշակերտներին բաժանեցի հայտորոշիչ թեստեր՝պարզելու դասի յուրացման մակարդակը:

Դասադիտարկողները դասալսման ընթացքում լրացրեցին դասադիտարկման հարցաթերթիկը,որի նպատակը և հարցերը ներկայացրել էի նախապես:

Դասալսողի անուն ազգանուն _____ Դասալսման թիրախը՝ սովորողների մոտիվացիան	
Սովորողի մոտիվացիան բնորոշող վարքագիծ	**Տվյալ վարքագիծը բնորոշող սովորողների անունները**
Ցուցաբերում է հետաքրքրություն , մասնակցում է դասին	
Պատասխանում է մարտահրավերային հարցերի	
Կատարում է գրառումներ	
Պաշտպանում է սեփական տեսակետը	
Կատարում է տրամաբանական առաջարկներ	
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	
Անտարբեր է	
Այլ վարքագիծ	

Հայտորոշիչ թեստ 1

1. Նշվածներից ո՞րն է ճիշտ

ա) եթե a>1 և x>y,ապա $a^x \rangle a^y$ բ) եթե a>1 և x>y,ապա $a^x \langle a^y$ գ) եթե 0< a<1 և x>y,ապա $a^x \rangle a^y$

2. Բաղդադել թվերը

ա) $\left(\frac{2}{3}\right)^{\sqrt{5}}$ և $\frac{8}{27}$ բ) $7^{-\pi}$ և 1 գ) $\left(6^{\sqrt{3}}\right)$ և 36

3.Հաշվել արտահայտության արժեքը

ա) $\left(2^{\sqrt{3}}\right)^{\sqrt{3}}$ բ) $\left(\sqrt{7}^{-\sqrt{8}}\right)^{-\sqrt{2}}$

Հայտորոշիչ թեստի արդյունքներն ու դասադիտարկողների հարցաթերթիկների տվյալները գրանցեցի նախապես պատրաստված աղյուսակներում հետագա վերլուծության համար:

Երկրորդ դաս `հանրահաշիվ , թեման «Ռադիան: Դրական և բացասական պտույտներ»: Նախորդ դասին աշակերտներին տվել եմ հանձնարարություն «Շրջված դասարան» մեթոդով դասն անցկացնելու համար, հանձնարարել եմ դասը սովորել դասագրքից ինչպես նաև օգտվել «Իմ դպրոց» կայքից, «Քան ակադեմիա» հարթակից և MathNet.am կրթական կայքից: Աշակերտներին պատրաստի տեսնյութեր չեմ տրամադրել, որպեսզի հետազոտության արդյունքում կարողանամ բնութագրել աշակերտների մոտ պատասխանատվության, պարտաճանաչության, հետաքրքրության, քննադատական վերաբերմունքի, այլընտրանքային մեթոդներ որոնելու, համացանցից օգտվելու, ինֆորմացիայի վստահելի աղբյուրները ճանաչելու, սովորել սովորելու, ուսուցման տեմպը իրենց կարողություններին հարմարեցնելու հմտություններում փոփոխությունները: Աշակերտներին ներկայացրել եմ «Շրջված դասարան» մեթոդով աշխատելու սկզբունքը, նպատակը, առավելությունները: Դասը վարում էին աշակերտները. սկզբում մտագրոհի միջոցով վերհիշեցին անկյան չափման միավորները և

դրանց ստացումը, այնուհետև, քանի որ կային աշակերտներ ովքեր չէին նախապատրաստվել դասին, բացատրեցին նոր նյութը: Շրջանագծի միջոցով սահմանեցին ռադիանը , բացատրեցին ստացումը, ռադիանն աստիճանով և աստիճանը ռադիանով արտահայտելու բանաձևերը, ներմուծեցին պտտման անկյուն հասկացությունը, սահմանեցին պտտման դրական և բացասական ուղղությունները: Ընթացքում աշակերտներն իրար հարցեր էին տալիս, պարզաբանում անհասկանալի հարցերը: Այնուհետև հարցերով ամփոփեցին և լուծեցին դասագրքից մի քանի վարժություններ: Անդրադարձ կատարեցին, հանձնարարեցին տնային աշխատանքը և վերջում լրացրեցին իմ բաժանած հայտորոշիչ թեստը:

Դասն անցավ շատ ակտիվ, հետաքրքիր, հագեցած մթնոլորտում: Աշակերտները ոգևորված էին, ակտիվ, հետաքրքրված, ավելի ուշադիր էին, մասնակցում էին քննարկումներին, արտահայտում էին իրենց կարծիքները, հարցադրումներ անում : Այս դասին ևս հրավիրված էին դասադիտարկողներ (տարբեր մասնագետներ), ովքեր լրացրեցին նույն բովանդակությամբ հարցաթերթիկ ինչ նախորդ դասին լրացրել էին մյուս դասադիտարկողները:

Հայտորոշիչ թեստ 2

1. Քանի ռադիան է փռված անկյունը .

ա) 90 բ) π/2 գ) π դ) 180

2. Պտույտի այն ուղղությունը ,որը համընկնում է ժամացույցի սլաքների շարժման ուղղության հետ անվանում են _____,իսկ հակառակ ուղղությունը _____:

3. Ռադիաններով արտահայտել

ա) քառակուսու անկյունները բ) հավասարասրուն ուղղանկյուն եռանկյան անկյունները

4.Քանի աստիճան է

ա) π/5 ռադ-ը բ) 7π/12 ռադ-ը գ) 12.5π ռադ-ը դ) 4π ռադ-ը

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում սովորողների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասեր կազմակերպել, քանի որ ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական մոտիվացիայի առկայությունն է: Քանի որ հետազոտվող դասարանը նաև իմ դասղեկական դասարանն է, մինչև հետազոտության սկսելը աշակերտներիս խնդրեցի գրել հինգ րոպեանոց շարադրանք «Ինչու՞ եմ գալիս դպրոց» վերնագրով, այնուհետև խնդրեցի լրացնել հարցաթերթերը, որպեսզի պարզեմ նրանց մոտիվացիայի մակարդակը և կազմեմ հետազոտության պլան: Շարադրանքների և հարցաթերթերի վերլուծությունից ստացա ավելի շատ և կարևոր տեղեկություններ աշակերտներիս՝ դպրոցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, մտահոգող խնդիրների, ուսումնական պրոցեսին վերաբերվող կարծիքների մասին :Իսկ մոտիվացիայի մակարդակը հետազոտությունից առաջ ուներ դիագրամում ներկայացված պատկերը: Ունեի միջինից ցածր մոտիվացիայի աստիճան ունեցող դասարան, աշակերտների մեծ մասը չէր կարևորում գիտելիքը և դպրոց գալիս են դասընկերների և որոշ ուսուցիչների հետ շփվելու համար: Հետազոտությանս նպատակը սահմանեցի՝ ելնելով դեռահասների մոտիվացիայի վրա ազդող դրական գործոնների ուսումնասիրությունից:



Անցկացրել եմ հետազոտություն երկու դասաժամերի ընթացքում: Առաջին դասաժամին չեմ կիրառել մոտիվացնող ոչ մի մեթոդ, դասի վերջում տվել եմ Հայտորոշիչ թեստ, գրանցել արդյունքները: Երկրորդ դասին կիրառել եմ «Շրջված դասարան» մեթոդը, Անդրադարձ փուլում նորից հանձնարարել

եմ Հայտորոշիչ թեստ: Համեմատել եմ երկու դասերի արդյունքները և հանգել եզրակացության, որ բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ ոչ բավարար ընդունակությունների ժամանակ, սակայն ոչ մի կարողություն չի կարող լրացնել մոտիվացիայի բացակայությունը և ապահովել ուսուցման առաջընթաց: Վերլուծելով դասադիտարկողների կողմից լրացված դասադիտարկման թերթիկների և հայտորոշիչ թեստի տվյալները, դրանք պատկերել եմ հետևյալ դիագրամով:



Կարևորն այն է, որ պասիվ և անինքնավստահ աշակերտները հասկացան, որ իրենք էլ կարող են կատարել իրենց առջև դրված խնդիրը, եթե լինեն աշխատասեր, չնահանջեն, գիտակցեն, որ ցանկացած աշխատանք կատարելիս հանդիպում են դժվարություններ և մարտահրավերներ, որոնցից ոչ թե պետք է խուսափել և վախենալ, այլ փնտրել հաղթահարման ուղիներ: Հետազոտությունը օգնեց նաև գնահատել սովորողների ուսումնառության հնարավորությունները, ինչպես նաև ,ինչպես նշել էի «Շրջված դասարան» մեթոդի նկարագրության մեջ, այս մեթոդը հնարավորություն տվեց էլ ավելի մտերմանալ աշակերտներիս հետ, հասնել անկեղծության և վստահության նոր մակարդակի: Հետազոտության արդյունքներից հատկապես կարևոր էր հետագա զրույցներից ստացածս տեղեկությունները : Օրինակ աշակերտուհիներիցս երկուսի մոտ ուսուցչի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության առաջացումը, նոր տեսանկյունից դրան մոտենալն ու դասը վարելուց հաճույք ստանալու մասին նրանց խոստովանությունները: Կային աշակերտներ ովքեր խոստովանում էին, որ «Շրջված դասարան» մեթոդով աշխատելիս իրենց մոտիվացրել է նաև այն, որ իրենք պետք է ինչքան հնարավոր է լավ պատրաստվեն և շատ նյութեր ուսումնասիրեն, որպեսզի կարողանան դասարանում իրենց

ընկերների տեղեկացվածությունը և ինացությունը ստուգել, տալ այնպիսի հարցեր, որոնց ոչ ոք չկարողանա պատասխանել: Մի մասի համար էլ մոտիվացիայի դրական գործոն էր դարձել դասադիտարկողների ներկայությունը, և իրենք հատուկ պատրաստվել էին, որ այս դասին իրենց անունը հայտնվեր ակտիվ աշակերտների ցուցակում: Իսկ այն աշակերտները, ովքեր տանը ոչինչ չէին արել, դասընկերների օգնությամբ դասի հիմնական հասկացությունները հիմնականում յուրացրեցին: Անտարբեր աշակերտ նույնպես եղավ,ով փորձեց խուսափել ակտիվ աշխատելուց և բավարարվեց տեղում գրելով: Բայց աշակերտների մոտ մոտիվացիայի աճը, դասի նկատմամբ վերաբերմունքի և հետաքրքրության աճը նկատելի էր: Այսպիսի դասերի անցկացումը պահանջում է ավելի շատ պատրաստվածություն, համբերատարություն, փոխհամագործակցություն աշակերտների և ուսուցիչների միջև: Եվ միայն ուսումնական նյութի մատչելի բացատրությունը բավարար չէ կրթության որակի և գիտելիքի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար : Ուսուցիչը պետք է հետաքրքիր և մոտիվացնող մեթոդներ կիրառի ,որոնց շնորհիվ աշակերտը կհանդիսանա դասապրոցեսի ակտիվ գործող անձ, պատասխանատու:

Այսպիսով ևս մեկ անգամ համոզվեցինք, որ դպրոցում պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ սովորողները լինեն մոտիվացված, կարևորեն գիտելիքը, հաճույքով հաճախեն դպրոց, առաջանա սեր և հետաքրքրություն ուսումնական գործընթացի նկատմամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ է անձ, ով ունակ է ինքնակրթվելու, ինքնակատարելագործվելու: Հետևաբար պետք է տարբեր ուսումնական առարկաների ուսումնասիրության ընթացքում բարձրացնել աշակերտների մտավոր և ճանաչողական մոտիվացիան: Այս հետազոտության արդյունքում ևս մեկ անգամ համոզվեցինք, որ դեռահասության շրջանում սոցիալական լայն շարժառիթները սովորելու և կրթական հետաքրքրությունների համար առաջատար դեր են ստանում: Դեռահասների ցանկությունը՝ գտնել իրենց տեղը դասարանում, ընկերների շրջանում, լավ սովորելու ցանկությունը պայմանավորված է ընկերների պահանջների մակարդակում լինելու, նրանց հեղինակությունը իրենց գործունեությամբ նվաճելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ այս տարիքի սովորողների շրջանում անկարգապահության վարքագծի, ուրիշների նկատմամբ բացասական վերաբերմունքի ամենատարածված պատճառը ուսումնառության ձախողումն է: Հետևաբար ուսումնառության գործընթացը բովանդակային առումով, նյութի մատուցման ձևով պետք է լինի ճկուն և հետապնդի ուսուցման հիմնական խնդիրներից մեկը՝ սովորողների գիտելիքների յուրացումը դարձնել տևական, բովանդակալից, իսկ բուն ուսումնառությունը՝ հետաքրքիր:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է աշակերտին այնպիսի կրթական գործունեության մեջ ընդգրկելու հնարավորությունը, որտեղ նա կարող է հասնել հաջողության՝ պատրաստ լինելով հաղթահարել դժվարություններ նաև ինքնուրույն: Դրա համար պետք է դասարանում ուսուցիչը պահպանի կայուն հուզական մթնոլորտ, ամրապնդի աշակերտների վստահությունը սեփական կարողությունների վրա, ստեղծի հաջողություն բերող իրավիճակներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հաստատում է նաև իմ վարկածը, որի համաձայն, ուսումնական գործընթացի նպատակային կազմակերպումը հանգեցնում է սովորողների մոտիվացիայի բարձրացմանը և հետաքրքրության ավելացմանը: «Շրջված դասարան» մեթոդը որպես առվորողների մոտիվացիան բարձրացնելու գործիք արդյունավետ է և որոշվել է ավելի հաճախ կիրառել նաև մյուս դասարաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Григорович Л.А., Марцинковская Т. Д. Педагогика и психология: Учеб. пособие. — М.: Гардарики, 2003. - 480 с. , Էջ 337]:

2. Дмитриева Н. Ю. Общая психология: конспект лекций. Эксмо, Москва. 2007, 128 с.]:

3. Зоткин Н. В., Серебрякова М. Е. Общая психология. Психология мотивации и эмоций. Самара: Изд-во. «Универс групп», 2007 - 196 с., Էջ 23]:

4. Ильин Е. П. Мотивация и мотивы. — СПб.: Питер, 2002 — 512 с., Էջ 65]:

5. Маклаков А. Г. Общая психология: Учебник для вузов. — СПБ: Питер, 2008. — 583 с, Էջ 513, 29, Էջ 463]:

6. Маслоу А. Х. МОТИВАЦИЯ И ЛИЧНОСТЬ. Мастера психологии - Питер, 2014. - 350 с.]:

7. Тертель А. Л. Психология. Курс лекций: учеб. пособие. 2006 - 248 с., Էջ 51]:

8. Шапиро С. А. Мотивация и стимулирование персонала. М.: ГроссМедиа, 2005. - 224

9. Шишкоедов П. Н. Общая психология. - Москва: Эксмо, 2009. - 284 с